

րի, իր կրօնական, բարոյական, իմացական ըմբռնումների և հասկացողութիւնների մէջ:

Այդ հիանալի ժողովուրդը, որի վրայ ամբարտաւան Եւրոպան նայում էր երկար ժամանակ արհամարհանքով՝ իր մէջ թագնւում է մեծ ազգի բոլոր ուժեղ յատկութիւնները: Մինչդեռ եւրոպացիին իր ըթից այն կողմ չէ տեսնում, ճապոնացին հետաքրքրւում է ամեն բանով, նա ճանաչում է նոյնիսկ հային: Այս մասին շատ բնորոշ է այն՝ ինչ պատմում է օր. Մելիք-Հայկազեան: Օրէորդը Կիօտօյում մի ճապոնացու տան հիւր է: Մտնում է տանտէրը մի վայելչահասակ, գեղեցիկ ճապոնացի: Փոխադարձ բարենեւրից յետոյ, այսինքն ձեռները ծնկներին վրայ դրած՝ խոր գլուխ տալուց յետոյ, տանտէրը իր ուրախութիւնն է յայտնում որ հիւրը պատիւ է արել իր տունը այցելելով:

«Յետոյ հարցրեց ազգութիւնս, և երբ իմացաւ, թէ հայ եմ, խիստ զարմացած՝ աչքերը չոեց ու հարցրեց վարանումով.

—Ա՞յն հայերից, որոնք շարունակ թուրքերի դէմ կուում են:

Հիմա էլ զարմանալու հերթը իմս էր:

—Ա՛խ միթէ դուք լսել էք հայերի մասին:

—Ի՞նչպէս չէ. յիշում եմ մի քանի տարի առաջ կոտորածներ կային, եթէ չեմ սխալւում: Այստեղ մի ինչ որ միսիօնար փող էր հաւաքում ձեզ ուղարկելու համար: Հիմա ի՞նչ վիճակի մէջ է ձեր երկիրը:

Ես նայում էի նրա երեսին ու չգիտէի, ի՞նչ պատասխանեմ, ուրախանամ թէ տխրեմ, որ մեր մեծ ցաւերի ալիքները մինչև ճապոնական կղզիներն էին հասել:»

Դժբանստ ժողովուրդ, որ քո ողբերգական անօրինակ ճակատագրով Ասիայի ամենախուլ անկիւններում անգամ տրտմօրէն հռչակուեցիր:

2.

Մ. Սերաօ, «Մամուլում մօռ». «Էփերզին խօսք». Թարգմ. ? հրատ. տիկին Զարէլի. 1905, Պետերբուրգ, 7 կոպէկ.

Վերջին տարիների հրատարակութիւնների շարքում բազմաթիւ դատարար ուշադրութեան արժանի են տիկին Զարէլիները, որոնք լոյս են տեսնում Պետերբուրգում և աչքի են ընկնում իրանց մաքուր տպագրութեամբ և լաւ թղթով: Բացի արտաքինից, հրատարակչուհին ուշք է դարձնում և նիւթերի ընտրութեան վրայ:

Այս 88 երեսից բաղկացած գրքոյկը նրա 7-րդ հրատարակութիւնն է և պարունակում է իտալացի ժամանակակից վիպասանուհի տիկին Մաթիլդ Սերաօյի երկու պատմութեան շարքը: Երկու վէպիկներն էլ կարդացւում են հետաքրքրութեամբ, որովհետեւ համարեա ժամանակակից նշանակութիւն ունեցող հարցեր են շօշափում: Երկուսն էլ վերցրած են տաժանակիր աշխատութեան դատապարտուածների կեանքից: Վերջինը մանաւանդ ընդորոշ է Թարգմանութիւնը կատարուած է թւում ռուսերէնից. լեզուն պարզ է, բայց առ հասարակ ջիղ չունի: Սրբագրութիւնն անխնամ է:

Սուրբէն

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐԳԵՐ

- 1) Гр. Чалхушьянъ—Армянскій вопросъ въ Россіи, 1905 г., Ростовъ на Дону. цѣна 10 коп.
- 2) Ֆ. Վ. Բելօրուս, «Թափառական բուլղար», պատմութեան շարքի ազգերի ապստամբութիւնից, Թարգմ. Ե. ք. Նալբանդեանի, 1905, Ալեքսանդրոպոլ, 30 կ.:
- 3) Բժ. Ա. Պլոտովսկի, «Ջընաղ Մարօն», դրամատիքական էտիլդ մի գործողութեամբ, հրատ. տիկին Ջաբէլի, 1905, Ս. Պետերբուրգ, 5 կ.:
- 4) Ա. Զանեանի, «Երկու պատկեր», Գիւղակ. և գործ. կեանքից 1905, Բագու, 10 կ.:
- 5) «Պետրոս Դուրեան», բանաստեղծութիւնների ժողովածու, հրատ. Ս. Մահտեսի Յակոբեանցի. 1905, Շուշի 10 կ.:
- 6) Ա.-Դօ, «Հայրենիքի կարօտը», 1905, Ս. Պետերբուրգ 5 կ.:
- 7) Իսրայէլ Միրաքեան, «Ախ իմ դարգեր», 1905, Վաղարշապատ, 10 կ.:
- 8) Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկօ, «Կենդանացած երգը», պատմութեան շարք, Թարգմ. Վ. Թումանեանի, 1905, Բագու, 10 կ.:
- 9) Մ. Տ. Շևտ, «Քիւրդ պէկ», (գծեր հայ-քրդական կեանքէն), 2-րդ տպագրութիւն, 1904, Ս. Պետերբուրգ 15 կ.:
- 10) Մատենագացա, «Հիւանդ Սէր», առողջապահական վէպ, բ. տպագր., Թարգմ. Ա. Գ. Դ. Ե., 1905, Ալեքսանդրոպոլ, 40 կ.:
- 11) Ս. Քամալեանց, «Սիրելի հերոս», Հասան խանի ժամանակի պատմութիւն, 1905, Թիֆլիս, 25 կ.:
- 12) Վ. Վերեսաե, «Մի անմեղ մարդու սոսկալի մահը», Թարգմ.